# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**N 6** **30.03.2012թ.**

ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈւ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հ Հ օրենքի 16 հոդվածի 3 կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

**1.** Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածի IV եռամսյակում նախատեսված 1375.1մլն. դրամ գումարը տեղափոխել I I եռամսյակ և կատարել հետևյալ փոփոխությունները. 700.0 հազար դրամ տեղափոխել 01-01-01-51 գործառնական դասակարգման հետևյալ հոդվածներին.

ա/ 4111հոդված -200.0 հազար դրամ,
բ / 4131հոդված – 200.0հազար դրամ,
գ/ 4213 հոդված -100.0հազար դրամ ՝ դեռատիզացիոն աշխատանքների համար,
դ/ 4264 հոդված -200.0 հազար դրամ՝ ավտոպահեստամասերի արժեք,

**2.** 11-01-02-52 գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 հոդվածի 3273.0 հազար դրամից 550.0 հազար դրամ տեղափոխել 06-06-01-56 գործառնական դասակարգման հետևյալ հոդվածներ .

ա/ 5112 հոդված - 500.0հազար դրամ ՝ <<Ջրային կառույցների շահագործում և պահպանում >,
բ/ 5134 հոդված - 50.0 հազար դրամ՝ <<Նախագծային ծախսեր>> :

**Ավագանու անդամներ՝**

1. ____________/Լյովա Գեղամյան/
2. ____________/Գրիգոր Թարվերդյան/
3. ____________/ Սարգիս Հարությունյան/
4. ____________/ Սերգո Ղազարյանը /
5. ____________/Վահե Հայրապետյան/
6. ____________/Ռուդիկ Առաքելյան/
7. ____________/ Գրիգոր Գրիգորյան /

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ Հ Հ 04Հ00443

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ **/Ֆ. Առաքելյան/**
/ստորագրություն/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**N 7** **30.03.2012թ.**

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.06.2010Թ. ԹԻՎ 4/2 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 54 արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 4 որոշմամբ և հիմք ընդունելով Հ Հ Արարատի մարզպետի 23.02.2012թ. թիվ 1/746-12 գրությունը `

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

„Բուրաստանի մանկապարտեզ„ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 3-րդ բաժնի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

18. <<Հաստատությունում ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունը իրականացվում է կրթության պետական կառավարման լիզոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան >>:

Ավագանու անդամներ`

1. կողմ ________ /Լյովա Գեղամյան/
2. կողմ ________ /Գրիգոր Թարվերդյան/
3. կողմ ________ / Սարգիս Հարությունյան/
4. կողմ ________ / Սերգո Ղազարյանը /
5. կողմ ________ /Վահե Հայրապետյան/
6. կողմ ________ /Ռուդիկ Առաքելյան/
7. կողմ ________ / Գրիգոր Գրիգորյան /

Կ. Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ________ / Ֆ. ԱՌԱՔԵԼՅԱՆ/

/ստորագրություն /